



## ՍՓՅՈՒՇՈՒԹՈՒՄ

ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ

### ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ Ի Ս. ԷԶՄԻԱԾԻՆ\*

 մենայն Հայոց Հայրապետ նորին Ս. Օծովյում Տ. Տ. Գեորգ Զ. Վեհափառի հրավերին վրա, օգոստոս 26-ին (1953), ուղևորվեցանք Ս. Էջմիածին՝ Հոգևոր Ճեմարանի մեջ որոշ դասընթացք մը ավանդիլու Հայաստանյաց նկեղեցվո աստվածաբանության մասին։ Վերջին քանի մը տարիներու ընթացքին՝ նորին Վեհափառությունը երկրց հրավերած էր մեզ նույն նապատակին համար, սակայն մեր ժամանականերուն պատճառով երջանկահիշտակ Տ. Գարեգին Կաթողիկոս հետաձգած էր մեր երթը Աթոռի Տեղապահ բարձրապատիկ Տ. Խադր արքեպիսկոպոսի պատասխան նորին Ս. Օծովյուն Տ. Գեորգ Զ. Վեհափառի հետագիրով կատարած հրավերին՝ հարմար գոտավ ու թուլացրեց, որ մենքնինք Ս. Էջմիածին՝ աստվածաբանության դասեր ավանդիլու համար։

Մեր կեպի Ս. Էջմիածին ուղևորության ընթացքին, նախ հանդիպեցանք Փարիզ, ապա կոնֆենանսարք Մանդանի և Մանդանի Տանչեստր՝ Դամբավանի պարտիկուլար շարք մը խնդիրներու կարգադրությանց համար։ Մեզի անհրաժեշտ եղող անձնափորությանց հետ տեսակացելեց ետք սեպտեմբերի 8-ին, երեքշաբթի օր, օդի ճամբայով մեկնեցանք Բրյուսել, ուր տեղիվուն թաղականության և վարչության խնդրանքին վրա սուրբ պատարագ մատուցինք Խաչվեսցի տոնին և

քարոզեցինք։ Թելքիայի հայեր ի պատիվ մեզի թեյասեղան մը տվին։ քաջազերված իրենց շերմ զգացումներն հանդեպ Կիլիկիո Դրապեկանքին, կազմեցինք Աթոռիս օգնող հանձնախումբ մը։

Բրյուսելին Պրագայի և Վարչավայի գծով մեկնեցանք Մոսկվա, ուր հասանք սեպտեմբերի 15-ին, երեքշաբթի օր։ Օդանավակայան դիմավորության եկած էին հանուն Վեհափառ Հայրապետին և Ս. Էջմիածինի միարանության՝ արժանապատիվ Տ. Խանուն Տեր-Հարությունյան, հանուն Հոգեվոր Ճեմարանի ուսանողության՝ քարեջնորդ՝ Անդրանիկ սարկավագ։ Գալամդարյան, և համայն Խորհրդային Միության Կրոնական դորձերու փոխ նախագահը։

Սեպտեմբերի 19-ին, շաբաթ օր, առավոտյան ժամը 1.30-ին օդի ճամբարով մեկնեցանք Երևան։ Մեր ճանապարհը տևեց 14 ժամ, բայց շատ հաճելի անցավ, որովհետեւ օդանավորունքը հայ էին, քաջ, աիրում, խուճեալ և հայրենասեր տղաք։ Շատ սիրեցի զիրենք և այնքան մտերմացա իրենց հետ, որ երբ Կովկասյան լեռներու վրայն կթռնեինք, զիս ներա մեքենաներուն քով տարին և ցուց տվին, թե ի՞նչպես վրարեին օդանավը Կովկասի ապահով Ս. Էջմիածին հասնիլ և այդ պատճառով օդանավը քշել շփորձեցի։ Երևան օդանավակայան վիմավորության նկած էին հոգեշնորհ Տ. Գեորգ վարդապետ՝ հանում Վեհափառ Հայրապետի և միաբանության, քարեջնորդ Սարգս սարկա-

\* Արտապատ է որոշ կրթառումներով։ — ԽՄԲ.։

վագ՝ հանում Հոգևոր Ճեմարանի ուսանողներուն, տեսուշ պարոն Մ. Մինասյան՝ հանում Ճեմարանի ուսուցիչներուն, Հայաստանի Կրոնական գործերու նախագահը՝ հանում Հայաստանի Կառավարության և պրոֆ. Աշոտ Աբրահամյան: Հոգեշնորհ Տ. Գեղրդ վարդապետի բարի գալուստի խոսքերեն ետք հոգումը Համբուրգի Մայր Հայրենիքի հոգը՝ ուժը տարվան իմ կարուս առնելով: Երեւանի մեկնեցանք դեպի Ս. Էջմիածին: Մայր Տաճարի դրան առջև, Ս. Էջմիածնի միաբանությունը և Հոգմարդը և Հոգմարդը Ճեմարանի ուսանողները, գերազնորհ Տ. Վահան արքապետսկոպոս Կոստանդնուպոլիսի գլխավորությամբ, դիմավորեցին մեջ: Սրբագին կատարեցինք մեր ուխտը հշման սեղանի առաջ ծնրադիր, և Արտայի նահատակներուն 34-րդ (1919 սեպտեմբերի 19) տարելիցին առթիվ սրուեռանդն աղոթեցինք անոնց հոգիներուն խաղաղության համար: Գերազնորհ Տ. Վահան սրբարական սրբազնեղ բարի գալուստի խոսք ուղղեց մեջ: Մենք ևս պատասխանեցինք: Ապա տեղի ունեցավ երեկոյան ժամերգությունը: Որքան ուզախ էի, որ Վեհափառ Հայրապետի հրավերով առիթ կունենայի դարձյալ Ս. Էջմիածին՝ Հայության «Մայրություն Սրբոց ինքանու, Տաճարին մեջ աղոթելու ու այդ պահուն ունկնդեղու ոլոյս զուարթօք, մանավանդ Տ. Նիկողի կողմե երգմած:

Հաջորդ օր, կիրակի, սեպտեմբերի 20-ին, սուրբ պատարագ մատուցեցի Հաղարավոր Հավատացյաներու ներկայության և քարոզեցի քննաբան ունենալով՝ «Միշտ անշարժ պահեա զԱրոն» Հայկական Տաճարին: Մոտ մեկ ժամ ծնրադիր Ս. Հաղորդություն բաշխեցի ժողովուրդին: Նույն օրը, Վեհարանի մեջ, գերազնորհ Տ. Վահան արքապահնի նախագահությամբ, ի պատիվ մեղք ճաշասեղան արքեցակ. ներկա էին միաբաններ, ուսուցիչներ, Գերագույն Հոգևոր հորհուրդի անդամներ, Կրոնական գործերու նախադահ պարոն Հրաշյա, պրոֆ. Աշոտ Աբրահամյան և պրոֆ. Առաքել Առաքելյան: Բաժակ բարձրացվեցավ Հայաստանյաց Եկեղեցով, Ս. Էջմիածնի, Հայ ժողովուրդի և Հայոց աշխարհի միության, անսասանության և Հավերժության համար: Ճաշեն ետք սեղանակիցներուն հետ գացինք Ս. Գայանեի տաճարը՝ հայց և հովստ մեր հոգևոր հոր՝ Հավերժության սրբազնի Համար արքապահները Մայր Հայրենիքի մեջ մեր գացինք Ս. Գայանեի գործությունը այսպէս գացինք Ս. Արքահամ ավագ քահանա Տեր-Պատասարյանի կողմե, որ կորուի, ալեփառ, պատկառազգու և քերմորեն հյուրասեր եկեղեցական մըն է: Բջնիեն անցանք Սեանա կղզին, որ երեկոյան մթնշաղին՝ անասելիորեն առինքնող հրապուր մը ուներ:

նակը լավագույնս օգտագործելու նպատակով՝ մեղի տրամադրեց մասնավոր ինքնաշարժ մը, իր շարժավարով: Սրտագինս գոհ մնացինք այս կարգադրութենեն:

21 սեպտեմբերի, երկուշաբթի. — Կեսօրեա առաջ այցելեցի Նոր-Կիլիկիա՝ Հայրենակիցներու, որոնցմե մաս մը նկարեցի: Ժամը 11-ին գերազնորհ Տ. Վահան սրբազնի հետ Քանաքետի էլեկտրակայանը գացինք պորտեկու: Մեղի ընկերացան պարոնայք Հրազդա Գրիգորյան և Ստեփան Կամսարական, հոգեցնորհ Տ. Գեղրդ վարդապետ և քարեզնորհ Սրբին սարկավագ: Անկե անցանք Արգնիի բուժարանը, հաստատված՝ Հրազդան գետի ափին, գայարագեղ վայրի մը մեջ երկու հաստատություններն ալ ազգին պատիվ կրերեն: Հրտկասիրությանք Արգնիի մեջ, հայկական ճոխ սեղանի մը շորջ:

22 սեպտեմբերի, երեխշաբթի. — Երեք ինքնաշարժներով, պրոֆ. Կարո Ղաֆաղարյանի առաջնորդությամբ Կարմիր բլուր գացինք պտտեկու: Հուս ուրարտական հին ամրոցի մը մնացորդները երեան եկած են: Ամրոցի տաճարը նվիրված է Թեյշեբարյի շաստություն և կառուցված է 800-ին (Ն. Ք.): Հակայական բերդ մըն է մոտ հարյուր սենյակներով: Հետո գացինք Դվին՝ Հայոց երբեմնի մայրաքաղաքը: Հուս երեան հանված են Մայր Եկեղեցին և Կաթողիկոսական պալատը: Կաթողիկեին ներփեկ ուրարտական բնակարաններու մնացորդներ երեան եկած են:

Կեսօրե ետք Դվինի կորանուեսությունները այցելեցինք: Ամեն ոք աշխատանքի լծկած է: Աշխատողին համար շարունակ գործ կա Հայաստանի մեջ: Կյուրասիրվածք Հայոց աշխարհի խաղողով և պտուղներով, ապա ձոխ սեղան՝ Արարատի ճշշտ գիմացը: Երեկոյին Սրբաշատ ևս այցելեցին ետք վերադառնության:

23 սեպտեմբերի, շորեխշաբթի. — Կարո Ղաֆաղարյանի և Աշոտ Արրահամյանի հետ այցի գացի Պատղավանք: Գմբեթավոր տաճարներու ամեննեն հին ձեզ հուս կունվի: Գմբեթը սյունի վլրա չէ, այլ՝ շորս մեծ որմակամարներու: Պատղավանքներ գացինք Բջնի, կառուցված՝ Հրազդան գետի ափին: Տաճարը՝ Ս. Աստվածածին՝ հիմնված է մել. գարուն Գրիգոր Մագիստրոսի օրուվ: Հուս հյուրասիրվեցանք տեղպույն հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Արքահամ ավագ քահանա Տեր-Պատասարյանի կողմե, որ կորուի, ալեփառ, պատկառազգու և քերմորեն հյուրասեր եկեղեցական մըն է: Բջնիեն անցանք Սեանա կղզին, որ երեկոյան մթնշաղին՝ անասելիորեն առինքնող հրապուր մը ուներ:

24 սեպտեմբերի, հինգշաբթի.— Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեղրդ Զ. Կաթողիկոս օդափոխութենեն վերադարձած ըլլալով՝ այսօր պատիվը ըրավ զիս ընդունելու՝ Վեհարանի մեջ։ Նորին Վեհափառությունը Հայրական գորգութանքով համբուրեց իմ ճակատս, իսկ ես ծնրադիր՝ Անոր Աշը։ Հոգեկան անսասելի հրճվանքի մեջ էի, որովհետև դարձալ առեթ կունենայի մեր կուսավորիչ Հոր արժանավոր Հայոցորդին Ս. Աշը համբուրելու և ծնրադիր Անոր օրհնությունը ստանալու։ Վեհը հակառակ իր հառաջացած տարիքին՝ առույգ է, քաջառողջ և կործե անխոնց։

25 սեպտեմբերի, ուրբար.— Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ այսօր միսա աստվածաբանության դասավանդության Հոգեկոր Ճեմարանի մեջ։ Առաջին դասախոսության նյութն էր. «Աստվածաբանության հզանակուրյունը և կարելուրյունը»։ Դասախոսության ներկա էին Վեհափառ Հայրապետը, Հոգեկոր Ճեմարանի տեսուչ պարոն Մ. Մինասյան իր ուսուցչական խոմքին հետ, Գերագույն Հոգեկոր Խորհուրդի անդամները, Ս. Էջմիածնի միաբանությունը և Կրոնական գործերու նախագահ՝ պարոն Հրաչյա Գրիգորյան։

Ապա, այնուհետև շարունակաբար շաբաթը նվազագույն հինգ օր երեկոյան ժամը 8—9.30, երբեմն մինչև ժամը 10 դասախոսություն տվի Ճեմարանի սարկավագներուն և բարձրագույն կարգի տասնողներուն, թվով 19 հոգի։ Եթե այցելությանց պատճառով չկարենայի գիշերները դաս տալ, հաջորդ օրը ցերեկներուն՝ կեսօրե ետք ժամը 3—4.30 կդասախոսեի։ Աստվածաբանության դասեր ավանդեցի մինչև նոյեմբերի 10, Խոսեցա հետևյալ նյութերու մասին։ 1) Աստվածաբանության բնդիանուր սահմանը. 2) Հայտնություն. 3) Արաշագործություն. 4) Գրիսոսի անձին վարդապետությունը. 5) Հայաստանյաց Եկեղեցին դավանաբանությունը. 6) Գրիգորության խորհուրդը. 7) Գրիսոսի Եկեղեցին. 8) Հայոց Եկեղեցին. 9) Խորհուրդներ։ Հովկական աստվածաբանության մասին ալ տվի քանի մը դասախոսություններ։ Ուսանողներ միշտ հետաքրքրությամբ հետեցան դասախոսությանց։ Անոնք Անթիւհասեն հետս տարած աստվածաբանական բոլոր նոթագործյուններս, որոնք Կիլիկիո Դպրեվանքին մեջ մեր դասավանդությանց ամփոփումներն էին, մեքենագրեցին։ Դասախոսությանց երբեմն ներկա կը լային միաբանության անդամներն և ուսուցիչներն ումանք և Ճեմարանի տեսուչը։ Ուսանողներ միշտ հարցումներ կհարցնեին. որով դասախոսության պահը միշտ կերկարեր և ավելի հետաքրքրական կդադարու։

26 սեպտեմբերի, շաբար. — Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնին առիթով պատարագեցի Ս. Էջմիածնի Կաթողիկեին մեջ։ Հավարտ սուրբ պատարագի հշման սեղանեն բարողեցի, բնաբան ունենալով «Ովաստ դիմ և կատարեցիլ»։ Քարոզիս մեջ ի միջի ալլոց ըսկ. «Ես նվիրական Կարողիկեին խորհրդաւող կամարներուն եերել։ Մեր հավերժաբնակ սուրբերուն նայվածին առջև առջև և մեր Մրազան Հայրապետի առաջ պետք է, որ բոլորս ովաստենք հավատարիմ մեալ մեր մայրենի Ս. Եկեղեցիին և ի գին ամեն զինուրյան անոր ծառայել»։ Քարոզը լրանալեն ետք Վեհափառ Հայրապետը շափազանց հուզված՝ համբուրեց ճակատս և մաղթեց՝ որ Հայությունը՝ ցրված ի սփյուռս աշխարհի՝ միշտ հավատարիմ մնա իր աղգային սրբությանց, իր մշակությին, Մայր Աթոռին և Մայր Հայրենիքին։

Ճաշասեղանին՝ ի պատիվ Վեհին եղան բաժականառերի ես խոսեցա հանուն Կիլիկիյան Աթոռին և մաղթեցի նորին Վեհափառության Երկար կյանք, որ իրմով հայ ժողովուրդը ապրի, և դարձալ կյանք, որ իրմով Հայաստանյաց Եկեղեցին գոյատևե: Սույն քանի մը խոսքերին ետք երգվեցավ «Եւր որ քացովն դռներն յուսոյ՝ բոլոր ներկաներուն ձառնակցությամբ»։

27 սեպտեմբերի, կիրակի. — Առավոտ շատ կանուխ արգեն հազարավոր ուխտավորներ լեցուցան էին Էջմիածնի վանքին բակը, պատեղներն ու Կաթողիկեն։ Ամեն կողմ զվարձություն, պար, իրախմանք, առաս կերտապու։ Ծողովուրդը իր ցնծատառնին մեջ է. Կարագա Խաչի տոնն է. ու դեռ ժողովուրդը իր Հայրապետի անվանակոչության տոնը կտոնախմբե։ Շատ դժվարավ կրցանք Վեհափառ Եկեղեցի առաջնորդի և ապա՝ Վեհարան։ Ժողովուրդը կուպար Համբուրի Անոր Ս. Աշը, փեշերը. շատեր կնեսովեցին իր ուժերուն առջեւ. հրմանություն. որևէ թիւադություն կամ հանդիմանություն օգուտ չուներ. Ժողովուրդը կսիրե իր Հայրապետը, և այդ սերը պաշտամունքի կհամանի։ Որոշված էր, որ ես քարոզեի, սակայն հրաժարեցա այդ ծրագիրեն, որովհետո հնար չկը խուժող քաղմության աղմուկը դադարեցնել։ Շատ հեռու տեղերե եկած հայ ովաստավորներ էին։ Այսօր Ս. Էջմիածնի մեջ 230 մկրտություններ կատարվեցան։

Կեսօրե ետք Օշական գացի պարոն Հ. Գրիգորյանի հետ հովատ և հերկրապատություն մեծ վարդապետի՝ Ս. Մեսրոպի գերեզմանին, որուն առջեւ ծնրադիր աղոթեցի մեր աղգին և Եկեղեցի վուրդը պահառության և մեր մշակությին անսասանության համար։

**28 սեպտեմբերի,** Երկուշաբթի.— Պարունայք Հրաչյա Գրիգորյանի և ճարտարապետ Վարագրատ Հարությունյանի հետ Երևանի զանազան կողմերու պատերու դաշի: Այցելեցինք Ճարտարապետներու տունը, Կեդրոնական ծածկված շուկան, Ստատիվամբ, Ֆիլհարմոնիայի շենքը, Մատենադարանի (Զեռագրատան) նոր կառուցվող շենքը, կենդանաբանական պարուեզը և ա՛մ նոր շենքեր:

Առանց շափազանցության կարելի է ըսկել, որ Երևան իրակ ճարտարապետական քաղաք շատ ավելի գեղեցիկ է քան մեզ հայտնի ելլուպական ո'րմէ մայրաքաղաք: Հայ նոր ճարտարապետներ իրենց կառուցած նոր շենքերուն մեջ միշտ հին հայկական ոճն է որ կիրարկեն: Ստեղծագործող հայ ժողովուրդը իր գերին մեջ է, Ապրի այդ ժողովուրդը:

**29—30 սեպտեմբերի,** Երեխշաբթի—շորեշշաբթի.— Սույն երկու օրերուն Վայոց ձոր և Ջերմովկ՝ Սլովյաց աշխարհը դաշի պատելու: Խնձի ընկերացան Կրոնական գործերու նախագահ Հրաչյա Գրիգորյան, Հովսեփ Եղիզարյան (Հովչարձաններու պահպանության կոմիտեի գիտնական քարտուղարը), բժիշկ Միքայել Նարիմանյան (բուժավայրերու վարչության պետի տեղակալ), բարեշնորհ Սարգիս սարկավագ և լուսանկարիչ Վորովը, Մեր ճամբու ընթացքին հանդիպեցանք Սևան, Հայրավանք, նոր Բայազիտ, Զարագոտ, Մակրար, Լճագյուղ, Գետաշեն, Մարտունի: Ապա բարձրանալով դեպի լեռնանցքը՝ իշանք Վայոց ձոր, Անցանք Քարվանսարային, Թառափութեան և Շարին վանքեն: Գետափ գյուղեն մեր ճանապարհը բաժնմեցավ դեպի Միկոյան և Արենի: Մեր աշխին ձորալանջի վրա Գնդեվանքն է: Քիչ մը անդին՝ Գնդեվազ գյուղը: Կհամնինք Զերմովկ, որ ծովու մակերեսեն 2.170 մետր բարձր է: Հանքարին շատ բուժիշ ջուրեր կան հոս, ուր ամեն տեղե հիմանդեր կուպան բուժվելու լուսանք կառնենք Զերմովկի մեջ. կպուտինք ձորը շատ գեղեցիկ է. փոքրիկ ջրվեժ մը կհորինե սիրուն տեսարան մը: Կիբրաղառնանք Արփայի ճամբարով: Արփային ձիով պարուն Եղիշաբեր հարացյանի հետ կերթամ Ամազու վանքը, որ 12 կիլոմետր հեռավորություն ունի. Ճիշավարելեն ավելի կքալենք: Ճամբան շատ վտանգավոր է: Բայց վերջապես կհասնինք Ամազու նորավանքը, ուր ԺՊ. դարուն թաղված է Ամբատ Օրբելյան, որ Սլովյան տերն էր: Բուրթել իշխանու այս վանքին մեջ կառուցած է Ս. Աստվածածին եկեղեցին՝ 1339-ին: Մեր վերադարձին կանցնինք Աղքարեցանի սահմանեն: Ովատավորի խոր ապումով կիբրադառնանք Երևան:

**1 հոկտեմբերի,** հինգշաբթի.— Ամբողջ օրը անցուցի Ս. էջմիածին՝ Վեհին հետ. ներկա եղանակու Հոգևոր Ճեմարանի դասավանդությանց. շանացի մոտեն ծանոթանալ ժառանգավորներն: Այցելեցի անոնց սենյակները, ճաշարանը և այլն: Թե՛ կեսօրի ետք և թե՛ երեկոյան ատովածարանության դաս ավանդեցի:

**2—3 հոկտեմբերի,** ուրբար—շաբար.— Երևան անցուցի ժամանակս: Պարոն Հրաչյա Գրիգորյանի հետ Պետական թանգարան այցի դաշի: Թանգարանի տնօրին պարոն Կարո Ղաֆարյան՝ հույժ համակրելի և գիտուն անձնավորություն մը՝ մեզ ամեն կողմ պատցուց: Շատ հետաքրքրական էր Հայաստանի արդյունաբերական ցուցահանդեմը: Մարդ կհիանա վերջին քանի մը տարիներու ընթացքին Հայաստանի շինարարական-արտադրական աշխատանքի վրա: Պետական թանգարանը չորս բաժին ունի. պատմագիտական, գրական, արվեստի և բաներգության:

Նույն օրը դաշի Շահումյան ավանը, որ արդեն քաղաքի մը վերածված է... Շահումյան ավանի մենուքս գործարանին մեջ Ամերիկային ծանոթներու հանդիպեցաւ: Շահումյանի մեջ կրնակին 250 քեսապցի ընտանիքներ. այցելեցի իրենց: Մայր աստիճան ուղարկած էր հավատացյալներով. զարմացաւ, ինչ համարդություն նվազավայր է նույնիսկ Միջին Արևելքի մեր եկեղեցիներուն հետ, ուր լուր օրեր այնքան քիչ է հավատացյալներուն թիվը:

**4 հոկտեմբերի,** կիրակի.— Ս. Պատարագ մատուցի և քարոզեցի Երևանի Ս. Սարգիս եկեղեցվու մեջ: Ոչ միայն տաճարը, այլև բակն անգամ լեցված էին հավատացյալներուն: Շատ դժվարավ կոցանք թափոր դառնալ: Ժողովուրդը ամեն կողմեն կիսում էր վրա, մեր աջը, փեշերը համբուրելու: Քիչ անգամ ականատես եղած եմ նման շերմեռանդության: Քարոզեցի, բնաբան ունենալով: «Ես եմ նաև պատրիք, եշմարտութիւն և կեանք»: Մոտ մեկ ժամ ծնրադիր Ս. Հաղորդություն ավի հավատացյալներուն: Հավարտ սուրբ պատարագի հարյուրավորներ աշահամբուրդի եկան: Մեկ ժամե ավելի ստիպվեցանք եկեղեցի մնալ: Օրվան մնացյալ ժամերուն այցելեցի բարեկամներու տուների Գիշերը թեյանեղանի Հրավիրվեցաւ եղիպտոսն ներգաղթած պարոն Հ. Արամյանի տունը. բազմաթիվ եղիպտահայեր ալ եկած էին. երգեցին, պարեցին և զվարեցան:

5 նոկտեմբերի, Երկուշաբքի.— Պարոն Կարռ Ղաֆաղարյանի հետ Դիլիջան գացի: Մեր ճամբու ընթացքին Ղաֆաղարյան շատ հետաքրքրական ու զվարճալի դրվագներ պատմեց մեզի՝ Անառյանի և Մանանդյանի փոխհարաբերության մասին. որով մեր ճամբորդությունը շատ հաճելի անցավ: Դիլիջան ունի գեղեցիկ և ներշնչող տեսարան. անտառը գույներու ծով մըն է: Այցելեցինք Զաղարձին վանքը՝ ամայի, կույս բնության մեջ կառուցված հսկա կոթող մը: Անկե անցանք Դոշավանք՝ անտառաշատ ըլուրներու կողերուն վրա կառուցված: Ճամբան շատ զիգզագէ, վտանգավոր, միայն անառուններու երթևեկության մատչելի: Շարժավարս լևոն, սյունեցի երիտասարդ մը, քաջ տղա, մեզ ապահով հասցուց, երրեմն մինչև իսկ ճամբաները կտրատելով: Գյուղին վերև՝ ըլուցի վրա՝ Մխիթար Գոշի գերեզմանն է: Ի՞նչ երկու լուսածությամբ կհամբուրեմ և «Հոգուց» մը կըսեմ: Մեծ վարդապետին գերեզմանը լքված կտնիմ. քարերուն վրա արյունը չէ ցամքեր. տակավին նոր մատաղ են մատուցեր: Հյուրասիրվեցանք գյուղին ուսուցիչներն մեկուն տունը. բայց ի՞նչ ջերմ հյուրասիրություն: Սրտեռանդն սիրեցի գերենք:

6—7 նոկտեմբերի, Երեխշաբքի—շորեքշաբքի.— Ալուտ կանուխեն հանդիպեցա քանի մը ծանոթներու տուն: Սովորություն է, որ հոս ո՞ր տուն որ մտնես, անմիջապես սեղան կսարգեն. ու այդ սեղանը ճոխ է և պեսպիսում:

Պարոն Սամոնջյանի և գերեզմանատան վերակացուի հետ գերեզմանոց գացի: Հոս մասնավոր գործարան կա գերեզմանաքարել պատրաստելու Շահ սրբազնի շիրմին համար կրանիդե հատ մը ապապրեցինք, վրան 5—8 սմ. թանձրությամբ մարմար: Սովոր գերեզմանատան մեջ մտավորականներու Պանդեռն կտնիմ. իրարու քով նույն մտերմությամբ կհանգչին Ստեփանոս Մալխասյան, Մանուկ Արեգյան, Գարեգին Լևոնյան, Ստեփանոս Լիսիցյան, Հրաչյա Աճառյան, Նիկողայոս Տիգրանյան, Փանոս Թերլեմեցյան և այլք: Սրտագին «Հոգուց» մը ըսի բոլորին:

Առիթ տանցաց Ս. էջմիածնի թանգարանը տեսնելու քանի մը հատ կարևոր հնություններ նկարեցի: Թանգարժեք իրեղեններն ու սրբությունները արկդներու մեջ դրված են: Մեծ աշխատանք պետք է գանձատան մեջ կանոնավորություն ստեղծելու և սրբությունները փնտացուի ազատելու համար:

8 նոկտեմբերի, հինգշաբքի.— Ճարտարապետ Թամանյանի որդիվուն և բարեշնորհ Սարգիս սարկավագի հետ ճամբան ելանք դե-

պի կոորդի: Անցանք Սևանեն և Դիլիջանեն, ուրկե կթեքինք դեպի Կիրովական նախկին Ղարաբիլսի: Հեռում՝ սարալանջին՝ աղվեսներու սովորովն է: Շէստեղ աղվեսներ են բազմացնում և մորթին ծախում: Խոսողը մեր շարժավար Լևոնն է: Հուզի գնահատելի ձեռնարկ: Մեր ճամբու երկու կողմերուն՝ 300 հեկտար տարածության վրա խնձորի ընդարձակ այգիներ փոված են: Կիրովականի մեջ կերթանք եկեղեցի. ծխատեր քահանան արժանապատիկ Տ. Գեորգն է: Կարճ ժամերգություն կընենք. ապա կհյուրասիրվինք իր տունը: Կշարունակենք մեր ճամբան զեպի Ալվերդի, ուր կհասնինք ուզ գիշերին:

9 նոկտեմբերի, ուրբար.— Դեռ արշալուկը հազիվ ծագած՝ կրարձրանանք Սանհին վանքը, որ Ալավերդին երեք կիլոմետր հեռավորություն ունի: Կհանդիպինք ովատավորներու, որոնց կհարցնենք.

— Ո՞ւ կերթաք:

— Ովատի, — կպատասխանեն:

— Ո՞ւ, — կհարցնենք դարձյալ:

— Ս. Սարգիս, Դսեղ:

Ու կերթան. սրտագին կմրմնչեմ. — Ովատերնիդ կատար:

Սանահին վանքը ունի պահակ. վերջին տարիներուն վերանորոգումի մեծ աշխատանքներ կատարված են հոն: Կայցելենք նաև Հաղբատի նշանավոր վանքը, որ քալելով մոտ երեք ժամ հեռու է Սանահինեն, ուր նույնպես վերանորոգման աշխատանքներ կատարվին: Սանահինն ու Հաղբատը իրենց գեղեցիկ տեսարաններով, կառուցված և եռամեծ վարդապետներու գերեզմաններով խորապես տպավորեցին զիս: Հիրավի մեր նախնիքներու հոգիներուն հետ ապրեցա: Սանահինն կանցնինք Օձուն, ուր Զ.—է. դաբերեն հուշարձան կա, անկե՝ Հոռոմայրի Ս. Նշան վանքը, ապա՝ Այգեհատ գյուղը, ուրկե կթեքինք դեպի Դսեղ՝ մեծ բանաստեղծին՝ Թումանյանի ծննդավայրը: Կպտտինք Թումանյանի տունը, որ հիմա թանգարանի վերածված է: Դսեղ հիրավի ներշնչող, սիրուն տեսարան ունի: Մեր ճանապարհը կշարունակենք Ստեփանավանեն և ուզ գիշերին կհասնինք Թիֆլիս:

10 նոկտեմբերի, շաբար.— Ամբողջ օրը Թիֆլիս անցուցինք... Թիֆլիս այժմ ունի 14 քահանա: Այցելեցի Սայաթ-Նովայի գերեզմանը, Շուշանիկի եկեղեցին, Վրաց Սիոն Մայր եկեղեցին և Մծիսեթ, որ 20 կիլոմետր հեռու է Թիֆլիսին: Մծիսեթի Մայր Տաճարը գերեզմանատուն մըն է վրացական թագա-

վորներու և կաթողիկոսներու Վերադարձանք թիֆլիս և այցելեցինք Ներսիսյան վարժժառանք, որ այժմ վերածված է համալսարանական բարձր ինստիտուտի: Երեկոյան գերաշնորհ Տ. Կահան սրբազնի հետ գացինք եկեղեցին, ուր մուտք գործեցինք զանգակաչարովիլ և «Ալփախ լեր» շարականով:

11 հոկտեմբերի, կիրակի.— Առոտուն պատարագեցի և քարոզեցի թիֆլիսի Ս. Գեորգ եկեղեցին: Բակն ու տաճարը հորդեին բազմությամբ: Դպրաց դասը երգեց քառուսայն: Քարոզ վաղ երգեց քառուսայն: Բայց միայն ի խաչն Տետոն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհի ի խաչ ելեալ, և ես աշխարհինք (Գաղ., Զ 14): Հավարտ սուրբ պատարագի կատարվեցավ Հայրապետական մաղթանք. շատ հույզի էր «Հոգիդ Աստուծոյ», կոմիտասյան եղանակով Հայրապետական մաղթանքին ետք քարոզեց գերաշնորհ Տ. Կահան սրբազնի: Կեսօրե ետք ժամը 4-ին գացի Շավինապատի Ս. Գեորգ վանքը, ուր հազարավոր հայեր և վրացիներ ովասի եկեր էին: Երեկոյան ժամը 6.30-ին քարոզեցի էջմիածնեցոց Ս. Գեորգ եկեղեցին սա բնարանով. «Յաւել ի մեզ, Տէ՛ր ամենափալ, զիաստ, զյոյս, զէր և զամենայն գործս առաքինուրեան»: Զարմացա տեսնելով, որ եկեղեցին լեցված էր հավատացյալներով: Հավարտ ժամերգության՝ աշահամբուլը. ի՞նչ նվիրում և երկուուղածություն բոլորի գեմքերուն վրա: Գիշերվան ժամը 9-ին գացի թիֆլիսի հայոց թատրոնը. կներկայացվեր Վագիպ՝ Հայ, պարսիկ և վրացական կյանքի առնված թատրերգություն մը: Թիֆլիսի հայ թատրոնը դեռ կպահէ իր հին փառքը:

12 հոկտեմբերի, երկուշաբթի.— Առոտուն կայցելեմ հայ սարկավագուհիներուն. ասոնք երեք հոգի մնացած են. Հոփիսիմ Ղոնյան, Կատարինե Գուգովյան և նոան Վերմիշյան: Առանձինն կուսանոց շունին:

Գերաշնորհ Տ. Կահան սրբազնի և Ստեփան Կամսարականի հետ կվերադառնանք իրեան: Ժողովությունը տամկացած աշքերով մեղ ճամբու կդնե: Մեր ճանապարհի վրա կհանդիպինք իջևան, Դիլիջան և Սևան: Երեկոյան կհասնինք Երևան, հոգեպես կազդուրած:

12—14 հոկտեմբերի, երեքշաբթի—շորենշաբթի.— Ժամանակս անցուցի ի Ս. էջմիածին՝ Վեհափառ Հայրապետի հետ: Դարձյալ ճեմարան գացի և դասավանդությանց ներկա եղան: Սարկավագուհիներուն սենյակները այցելեցի՝ մոտեն ծանրթացա անոնց առանձնական կյանքին: Այցելեցի Ներսիսյան լիճն ու անտառը. նաև Այդը լիճը, որ էջմիածնեն 13 կիլոմետր հեռավորությամբ՝ Արագած

տանող ճամբուն վրա կգունվի: Հոս շինված է շրամատակարարման կայան մը, որ 180 քառակուսի կիրամետը տարածության վրա անպատ վայրերը կոռոգի: Ճաշեցի պրոֆ. Աշոտ Արրահամյանի, պրոֆ. Առաքել Առաքելյանի և հայրենակիցներու տոները:

15 հոկտեմբերի, հինգշաբթի.— Հոգեշնորհ Տ. Գեորգ վարդապետին և պրոֆ. Աշոտ Արրահամյանի հետ մեկնեցանք Գառնի. պեղումներ եռանդագին կշարունակվին հոս: Տրդատա թափառին մեջ մողայիկ գոնվեցավ: Պեղումներու ղեկավարը մեղ պտտոցուց: Գառնին կանցնինք Գեղարդը. հոգեկան անասելի հրձվանքով ծնրագիր կաղոթեմ հինավուրց ժայռափոր տաճարին մեջ: Վանահայրը հոգեշնորհ Տ. Նահապետ վարդապետ մեզ կհյուրասիրե: բարի և ծերութագարդ եկեղեցական մըն է: Վանքը քահանա ալ ոմի, որ կիրակի օրեր սուրբ պատարագ ալ կմատուցան և մկրտություն կիատարե: Ամառվան ընթացքին կիրակի օրեր 100—150 մկրտություն կիատարալի Գեղարդի մեջ: Վանքը ոմի 140 ուժար և այժ, 105 մեղքի փեթակ: Տարեկան 800 կիլոգրամ պանիր կորկեն Ս. էջմիածին՝ միաբանության. նաև մեծ քանակությամբ մեղր:

Գեղարդին կանցնինք Գողթն, որկե ձիերով Աշոտ Արրահամյանի և գյուղացիներու հետ կրարձանանք Հավուց թառ: Մեր վերելքը դժվար էր և վտանգավոր. բայց ապահով հասանք շնորհիվ մեղի ընկերացող երիտասարդներու հոգածության: Հիրավի թըռչումները միայն կրնան հոն թառիլ...: Տեսարարանը հրաշալի է: Կվերադառնանք ձիով Ազատ գետի հովտով: Կոմիմավորվինք Գառնիի մեջ, ուրկե մեր ինքնաշարդը մեզ կառաչնորդե երևան:

16—17 հոկտեմբերի, ուրբար—շաբաթ.— Այցելով յուններով անցուցի ժամանակս: Գացի Պետական համալսարան, Մատենադարան (Զեռագրատուն), Գիտական ինստիտուտ, Ֆիլհարմոնիայի արահ՝ երգի և պարի անսամբլը դիտելու, որմե շատ գոհ մնացի: Մանոթաց գիտական աշխատողներու և պրոֆեսորներու հետ: Շաբաթ երեկո գացի Ս. Հովհաննես եկեղեցի, որ լեցված էր հավատացյալներով: Ներս մտանք զանգակաչարովիլ և «Ալփախ լեր» շարականով:

18 հոկտեմբերի, կիրակի.— Պատարագեցի և քարոզեցի Երևանի Ս. Հովհաննես եկեղեցին, որոն դպրապետն է պարոն Սարգիս Անդրեասյան, Անթիլիսասի Դպրեվանուց նախկին սաներեն: Հոս ևս ականատես եղանք կրոնական անպատմելի շերմեռանդության: Քարոզեցի ձից և զմեզ հոգուվի բով սրբանի շուրջ: Կեսօրե ետք Ավետիք Իսահակյանի հետ Ս. էջմիածին գացինք՝ Վեհա-

փառ Հայրապետի հետ ճաշելու։ Ո՞րքան ճա-  
ճելի էր մեզի՝ այս երկու մեծ անձնավորու-  
թյանց հյուպետի խոսակցությունը ունկնդրել։

19—24 հոկտեմբերի, Երկուշաբթի—շա-  
բաթ.— Այս օրերում՝ ինձի տրամադրված  
շարժավարը՝ կոն պաղառության հետևան-  
քով հիվանդացավ։ Կերպի շափազանց հոգնե-  
ցուցեր էր զինք։ Իրեն տեղ զիս սկսավ  
պտտցնել Կրոնական Խորհուրդի մյուս շար-  
ժավարը Դավիթն, երևանցի, 22 տարեկան  
վառվուն, պարզաբեր և բարեմուլն երիտա-  
սարդ մը։ Հաջորդ օրն իսկ իր անոնքը Վար-  
դանի փոխեցի Իրեն հետ առիթ ունեցա այ-  
ցելելու Արարատյան գավառի վանքերը։ Նախ  
գացինք Բյուրական, տեսանք աեղվույն աստ-  
ղադիտարանը, Կաթողիկոսական ամառանո-  
ցի հին շենքը և Դրասխանակերտցի կաթո-  
ղիկոսին շինել տված բազիլիկ ոճով եկեղե-  
ցին։ Բյուրականեն անցանք Ամբերդ՝ կա-  
ռուցված սարալանցի վրա։ Բերդը պարսպա-  
պատ է, գրեթե ավերակ վիճակի մեջ։ Հոս  
կա ԺԱ. դարեն հոյակապ եկեղեցի մը։

Հոկտեմբերի 20-ին այցելեցի Արում (Թա-  
լիշ), ուր կոտովի Գրիգոր Մամիկոնյանի  
կառուցած եկեղեցին է. դարուն, եկեղեցվույն  
հարավ-արևելյան կողմը Գրիգոր Մամիկոն-  
յանի ապարանքին մնացորդները երևան բեր-  
ված են Կանցնինք Կոչ կամ Կվաշ, ուր նշա-  
նավոր հուշարձան է Ս. Ստեփանոսի վանքը՝  
կառուցված է. դարուն։ Կայցելենք Մտւոնին  
Ս. Գեորգ փառավոր եկեղեցին. ապա՝ Կար-  
րի, Հովհաննավանք և Սաղմոսավանք։ Վեր-  
շին երկու վայրերուն մեջ գյուղացիք հիշե-  
ցին Գարեգին Վեհափառը, որ տարիներ ա-  
ռաջ եկեր է և Հասպիտական ուսումնասիրու-  
թյուն ըրեր։

Աշտարակ գյուղը նշանավոր է իր հնու-  
թյուններով։ Մարիանն տաճարը կառուցված  
է ԺԹ. դարուն. ուղղ արտաքուստ կհիշեցնե  
գոթականը, ներքուստ ունի խաչաձև հատա-  
կագիծ։ Կարմրավոր Ս. Աստվածածինը շին-  
ված է է. դարուն. ծածկված է է. դարեն  
մնացած կղմինդրով, որ ամրացած է կրա-  
շաղախի հետ մետաղի գամերով։ Հետո գա-  
ցինք նույն գյուղի Միւրանավոր եկեղեցին,  
որ իր ձևով ե. դարու կառուցվածք ունի, և  
Սպիտակավոր Ս. Աստվածածին եկեղեցին՝  
կառուցված ժԹ.—ԺԹ. դարերուն Քասաղ գե-  
տի ափին։ Աշտարակի մեջ է նաև Պերճ  
Պողոշյանի տուն-թանգարանը։ Աշտարակեն  
կանցնինք Փարպի. ի՞նչ սիրուն և աղվոր  
գյուղ։ մեր միտքը Ղազար Փարպեցիով  
կորավի։ Փարպի ալ ունի հին հուշարձան-  
ներ—Ս. Գրիգոր, Ս. Թարգմանիչը և Ս. Աս-  
տվածածին և Ս. Աստվածածին և Ս. Աստվածածին

կայցելենք Ուշի, ուրկե երկու կիլոմետր հե-  
ռու կոտովի Ս. Սարգիս եկեղեցին, կառուց-  
ված ե. դարուն։ Ուշիի դպրոցին անօրենը  
կհյուրասիրե մեզ ճոխ սեղանով։ Կմեկնինք  
Աղց գյուղը, ուր կայցելենք Դ. դարեն մնա-  
ցած գետնաշարկ մատուռ մը։ Լուսամուտ  
շոնի և տանիքը գետնին հավասար է։ Հյու-  
սիսային և հարավային կողմերը կոտովին  
դամբարաններ, հավանորեն Արշակունի թա-  
գավորներու Կմեկնինք Դղեր (Հնում Տեղեր),  
Արիաշա գետի ափին, սիրուն տեսարանով  
գյուղ մը։ ճանապարհը շատ վատ է. քանի  
մը կիլոմետր կքալենք Դղերի ժամատան  
գմբեթին մեջ կա փոքր սեղան, ուր սորբ  
պատարագ կմատուցվի եղեր, երբ ժողո-  
վորդը թշնամիներով պաշարվեր։ Դղերեն  
կուղղվինք Եղվարդ գյուղը՝ նշանավոր իր Ս.  
Աստվածածին եպահարկ եկեղեցիով և ա յի  
հուշարձաններով։

Շաբաթ օր, հոկտեմբերի 24, այցելեցինք  
Պիոներների պալատը և ապա Օպերա՝ տես-  
նելու «Դավիթ-Բենկը» Արմեն Տիգրանյանի  
վերջին աշխատությունը։

Երևանի Օպերան քառորդ դարու կյանք ու-  
նի, բայց կրնա մրցիլ մեկ դարու կյանք ու-  
նեցող որևէ օպերայի հետ՝ իր արվեստով և  
բեմադրությամբ։

25 հոկտեմբերի, Կիւրավի։ — Երևանի Ս.  
Զորավար եկեղեցիին մեջ պատարագեցի և  
քարոզեցի՝ հոծ բազմության մը ներկայու-  
թյան։ Հավատացյալներուն մեջ նշմարեցի  
ներգաղթողներու բազմաթիվ դեմքեր, որոնք  
հավարտ սուրբ պատարագի աշահամբուլիք  
եկան։ Քարոզիկ բնարանը սա էր «Եւ ամե-  
նայն, որ կենցանի է և հաւատայ յիս, մի՛  
մեոցի ի յափառան» (Հովհ., ԺԱ. 29). Սույն  
տաճարին մեջ ևս ականատես եղանք նո՛ւն  
շերմեռանդության և հալատքի պոռթկման։  
Կեսօրվան ճաշու Քնարիկենց հոր տոմսը բրի-  
գիրենք կճանշնալի Գեղարդի իմ առաջին  
ուխտագնացությենես (1945)։

Գիշերը շատ հյուգեր և այցելուներ ունե-  
ցաւ։ Ամեն ոք իր բարեկամներն ու աղքա-  
կանները կհարցնեն։ «Հանգիստ ենք ու երջա-  
նիկ», կրսեն։ «Հաղորդեցեք մեր ողջույնները  
ամենքին»։ Ինձի այցելուներուն մեջ Դղեր-  
վանքի նախկին երկու սաներ կային, սան  
մըն ալ երուաղեմի ժամանակավորաց վար-  
ժարաննեն։ Երեքին ալ կթելադրեմ, որ Հովհու-  
րեմարան հաճախեն և նվիրվին Հայաստան-  
յաց Ս. Եկեղեցվո ծառայության։ Մեր խոս-  
քերը միայն մեկուն հոգիին մեջ տեղ կբռու-  
նեն։

26 հոկտեմբերի, Երկուշաբթի։ — Կեսօրին  
պարոն Մովսիսյանի հետ պատելու կմեկնին  
Սարդարապատի շրջանը, որ այժմ կկոչվի  
Հոկտեմբերյան և բաժնված է շատ մը սով-

խոզներու Կիմանամ, որ նախապես այս բոլոր վայրերը անապատ եղած են, իսկ այժմ սքանչելիորեն մշակված:

Զորս կողմդ խալովի և բամբակի ընդարձակ գաշտերը կյանքը ամենուրեք իր լիությամբը կեռաւ: Այս շրջանը 32 գյուղեր կպարունակե - Եղեգնուտ, Տանձուտ, Փշատավան, Մրգաշատ, Բամբակաշատ և այլն. ի՞նչ աղվոր անուններ: Սարդարապատի մեջ այցելեցի պահածոյի գործարան մը. այս տարի 15.000.000 տուփ պատրաստած են. գործարանը իր արտադրությունը Միության բոլոր երկիրները կդրկե: Հոս բամբակի գործարան ալ կա. բակին մեջ դիպված է դաշտեն բերված բամբակը, կազմելով շորու փոքրիկ բլուներ: Գործարանի տնօրենը բարեկիրթ անձըն է, որ ամենուրեք կպտտցնե մեզ:

Ապա մեկնեցանք Արմավիր. բարձրացանք  
բլուրը: Արմավիրի մեջ գտնված են ուղար-  
տական սեպագիր արձանագրություններ, ըստ  
որոնց ուղարտական Արգիշտի Ա. թագավորը  
(780—755 Ն. Ք.) մայրաքաղաք ունեցեր է  
Արմավիրը: Այս քաղաքին մեջ երկան բեր-  
ված են բազմաթիվ արձանագրություններ,  
որոնք տարված են Երևանի պետական թան-  
գարանը: Կվերադառնանք Ս. Էջմիածինի՝ Ա-  
րարատյան դաշտի երկար ու առինքնող վեր-  
ջալուսին մեջ:

27 Ինկամերերի, Երեքշաբքի.—Կհսօրեա-  
ռաշ շուկա իշա գնումներ ընելու. մեծ վաճա-  
ռատան մը մեջ հայտ տիկին մը երեխան շալ-  
կած մոտեցավ ինձի և բսավ.

— Տեր հայր, էս տարվա վերադիրը  
ի՞նչ է:

— Զգիտեմ, — պատասխանեցի:

— Դուք քահանա շեք:

$- u_{jn'}$

— Բայց ո՞նց շեք իմանում վերադիրը:

Ղավ բաս մը եղավ ինձի ասիկա: Իբրև հայ հկեղեցական դեռ շատ բան ունինք սորվելիք:

Պրոֆ. Աշոտ Աբրահամյանի հետ Հանրապետության գրադարան գացի: Տնօրինությունը ու պաշտոններուն ըստ սիրալիք ընդունելություն ըրին մեզի: Հասսաւությունը երեք միլիոն գիրք ունի. Հայագիտական քանի մի կարևոր գիրք երեք նվիրեցին ինձի. փոխարքնը ևս ալ իրենց մեր հրատարակություններին պիտի ղրկեմ: Հետո այցելեցինք Մատենադարանի տնօրինին, որ պատվական թանկարժեք երիտասարդ մըն է. Հոս գիրքերու նկատմամբ նույն կարգադրությունը որինք:

Կեսօրե ետք Հրաշյա Գրիգորյանի և Աշոտ  
Աբրահամյանի հետ Խոր-Վիրապ գացի: Մա-  
սիսի ստորանունը Հաղիկ 10—12 կիլոմետր  
Հեռավորության վրա կառուզմած է Հինա-

վորց այս վանքը: Խոր հուզումով կմոտենանք մեր հավատքի Հոր ճգնաբանին: Երկուղածովթյամբ կիշնենք Խոր-Վիրապին մեջ. բացարձակ մթովթյուն, կավառմ մոմ մը. կլոր խուզ մըն է, արենելան կողմը փոքր սեղան մը. կհամբուրեմ սրբատաշ քարերը. ծնրադիր կաղոթիմ Հայոց աշխարհի, հայ ժողովուրդի, Հայաստանյաց Եկեղեցվո հավերժության համար: Կհատնի մոմին լուսը. կմնամ խավարին մեջ. հանկարծ կապույտ լրկինքն կտոր մը կտեսնեմ: Խուցին տանիքը փոքր ծակ մը ունի, ասկէ է որ սովորը ստացեր է իր սնունդն ու իր լուսը: Ու սուրբին է, որ այս անգամ կուղղվի աղոթքս: «Ո՞վ հայր և բուապտորիչ Հոգվոց մերոց, աղաշնմք զքեզ, հատկապէս բարեխօսեսցես առ Թրիստոս Աստուածն մեր, զի զեկեղեցին և զմնացորդս ժողովրդեան քո. պահեսցէ ի խաղաղութեան...»: Հոգեկան անասելի երանության մը մեջ ուաքի կկանգնիմ ու վեր կրարձանամ ընկերակիցներուա քովէ:

Սեր դիմաց քիչ մը անդին Արագսն է, հա-  
վիվ նշարելի մեր աշխերուն Կուլկմ անոր  
ափը երթաւ. անկարելի. սահմանագործուն է,  
ու վրեմի զայրութը կածի ներս. ևս հայ  
ուստավոր եկեղեցական մըն եմ ու առանց  
Արագսը տեսնելու և անոր ջուրեն խմելու  
պիտի վերադառնամ...: Համաշխարհային  
երկրորդ պատերազմին ի՞նչ երազներով ապ-  
րեցանք ու գործեցինք:— Արագսն ու Մասիսը  
ձերն են,— ըսին մեզի Ամերիկայի մեջ:—  
Արագսն ու Մասիսը մե՛րն են,— կրկնեցին  
մեզի Հայաստանի մեջ: Բայց ևս քարոզնկեց  
մը անդին չեմ կրնար հառաջանալ: Կանգ-  
նած Խոր-Վիրապի պարիսպին վրա, գեմք՝  
զուզգ Մասիսներուն ու շառագունած հորի-  
զոնին, ներսես ձայն մը կըսի ինձի:—  
Արագսն ու Մասիսը մեր անկողոպտելի իրա-  
վունքներն են, մե՛րն են, մե՛րը պիտի ըլլան  
հավիտյան: Այդ հույսով պիտի ապրինք:  
«Յուս ու երեք ամաչեռուուել»:

28 Խոկտեմբերի, շրեեքաբըրի.— Վեհափառ Հայրապետը դարձյալ երկարորեն խոսեցավ ինձի իր ծրագիրներուն մասին։ Կազմակերպող ու խորաթափանց միտք մըն է, եղելությունները նախատեսող ու իրաց կարգը լավագույնս ըմբռնող անձնավորություն մը։ Առանձնահատուկ ձիրք ունի զեկուվարելու և առաջնորդելու Նորին Վեհափառության ծրագիրներն են վերականգնել Ս. Էջմիածնի Մայր Աթոռը, վերանորոգել Տաճարը, Հոգեվոր Ճեմարանի ուսանողներուն թիվը քառապատկել, բազմացնել եկեղեցականներու թիվը՝ որպեսզի մինչև իսկ ամեն պյուլ ունենալ հր հոգեսոր հովիվը, արտասահման— Թեղին և Առնոռն— ողեեւ աշաենքոտներ, ոսոն աստ-

վածաբանական բարձրագույն ուսումի հետմահին և Հայրենիք վերարառմալով պայծառացնեն Հայոց Եկեղեցին, արտասահմանեն 15—20 ուսանողներ բերել՝ Ս. էջմիածնի ճեմարանին մեջ իրենց ուսումը 2 արունակելու և Եկեղեցականության պատրաստվելու երրուաղեմեն և Անթիլիասեն 2—3 Եկեղեցականեր կուզե, որպեսզի Ս. էջմիածնի երթան և Կրթական, քարոզական ու առաջնորդական գործերով զբաղին: Մեզի առանձնապես պատրաստանատու պաշտոն առաջարկեց. սիրով ընդառաջեցինք: Ծրինք մեր թելադրությունները, Ս. էջմիածնի և Հայոց Եկեղեցին ծառայելը մեր իսկական պատականությունն է:

**29—30 հոկտեմբերի,** հինգշաբթի—ուրբար.— Երևանեն մասնավոր պատկերահան բերել տվի՝ Ս. էջմիածնի գանձատան մեջ գտնվող թանկարժեք իրերը նկարել տալու համար: Նպատակ ոմախմ այդ պատկերներով առանձին ալբոմ հանել: Հնովթյունները ՅԵ սնդուկներու մեջ դրված են. ամենքն ալթագրված են: Ամբողջ օրը մենք հազիվ կարողացանք 12 սնդուկ բանալ, իրերը դուրս հանել և մեր հավանածը նկարել տալ:

Վեհափառ Հայրապետը հաղորդեց ինձի, որ Երևանեն հավատացյալներ մասնավոր խնդրանք ներկայացուցած են իրեն, որպեսով իս քանի մը ամիս ևս մնամ հոս իրենց քարոզելու համար: «Ուսումն ենք, որ Տեր Դերենիկ սրբազնը մեզ հոգեւոր նյութերի մասին մի քանի ամիս քարոզ տա»: Թեպես սիրելի, բայց դժվար էր ընդունիլ անոնց խընդրանքը:

**31 հոկտեմբերի,** շաբաթ.— Առավոտյան ժամը 8-ին մեկնեցա Սիսիան, Սյունյաց աշխարհը, պարոն Հովհաննեսի Եղիազարյանի հետ: Անցանք Գեղամա սարերուն վրային. ահա Սյունիք իր բարձր, լերկ, ձյունապատ լեռներով, Մեկ ժամ ետք քովն ենք Սիսիանի գործկոմի նախագահին՝ պարոն Եղիազարյանի, որ բարեկրտ և ազիկ անձնավորություն մըն է: Քիչ ետք տեղվույն հովիկ արժանապատիկ Տ. Վահանա քահանա Տեր-Հովհանիմյան կուզա: Կորոշենք վաղը հոս պատարագել և քարոզել: Նախագահին ինքնաշարժարժություն կմեկնինք Գորիս, մինչ արժանապատիկ Տ. Վահանա վաղվան պատարագին համար պատրաստություններ կտեսնեն: Մեր դիմաց՝ ճանապարհին՝ Իշխանությունը սարն է, Զանգեզուրի լեռնաշղթային ամենեն բարձր գագաթը: Քանի մը կիլոմետր ծյունի վրային հճամբորդենք: Ժա-

մը 11-ին կհասնինք Գորիս. Կերթանք ուղղակի գործկոմ: Ժողովի մեջ են. մեզ կընդունին հոտնկայս: Երևանեն արդեն հեռածայներ են նախագահին մեր գալու մասին: Շուտով կճաշենք և «Ալիս» ավտոյով մը ճամբար կելլենք դեպի Տաթև, Սյունյաց վարդապետարանը: Ինձի կընկերանան Եղիազարյան Հովհաննեսի և գործկոմի նախագահը՝ իր օգնականով: Կանցնինք Որոտան գետի վրային, ապա կրածրանանք սար. ամենուրեք խիտ անտառներ: Արեւ կանհետի. մշուշը կպատե մեզ ու հետզհետե կթանձրանա: Վեռներուն վրա ճանապարհը շատ նեղ է, ցեխուտ, անանցանելի և վտանգավոր. ինքնաշարժը կտատանի, կարծես պիտի սահի և իյնա վարը՝ ահավոր անդունդին մեջ, Տարժավար և նախագահ անհանգստության նշաններ ցույց կուտան. կվախնան, որ մի գուցե վտանգի հանդիպինք: Կշանան զիս համոզել, որ վերադառնանք:

— Առանց Տաթևեւ, Սուրբ Գրիգոր Տաթևացիի գերեզմանը տեսնելու և համբուրելու շեմ վերադառնար,— կպատասխանեմ:

Իզուր կջանան համոզել զիս. Կհաղթենք սյունեցիներու համառության: Քանիցս մեր ավտոն կիրի ցեխին մեջ. բայց չենք հուսահատիր: Կիշնինք ձոր. քանի մը կիլոմետր մնացած է. Սյունեցիք առույգ նժույգներով կդիմավորեն մեզ: Կհասնինք Տաթև. ահա՝ վանքը, Սյունյաց մեծ համալսարանը, հայության լուսի ու հավատքի վառարանը. Հոգեկան անասելի բերկրանքի մեջ ենք:

Տաթևի վանքը ավերակներու մեջ է 1931-ի երկրաշարժին հետևանքով Եկեղեցիի պատերեն մաս մը կանգուն է: Ահա մեծ վարդապետին՝ Սուրբ Գրիգոր Տաթևացիի, գերեզմանը. կծնաղրեմ, կհամբուրեմ զայն. կրոցեմ մոմ մը ու ադուֆք իրեն կուղղեմ, որ բարեխոս ըլլա առ Աստված՝ մեր Ս. Եկեղեցվոր հավերժ պահպանման և անսասանության համար: Կյանքիս մեջ ինքզինքս այսքան երջանիկ չէ զագացած. իմ սիրած ու պաշտած ամենեն մեծ վարդապետին գերեզմանը գտած էի: Ի տղա տիոց Տաթևացին ունեցած եմ իմ կյանքիս իրեւ հարացույցը:

Կանգուն է Գավաղան-սյունը. ու ես երկուուժորեն կծնաղրեմ անոր առջև: Մեզը ավելի կթանձրանա. մութը իշեր է արդեն: Տաթևի երեկո է. ու ես Գավաղան-սյունին

առջև ծնրադիր կաղոթեմ սյունեցիներու հետ։ Կերպեմ մէոյս զուարթօք։ Գլուղացիք կծայնակցին ինձի ու մեր երգը կիսառնվի Որոտան գետի հավերժական երգին հետ։ Կհյուրասիրվինք տեղվույն վարժարանի տնօրենին տունը. ի՞նչ բարի և ազնիվ հայ մըն է։ Տաթևացիք կրոլորվին մեր շուրջը. կայտառ, վառվոռն, շենշող լեռնականներ են։ Նախագահը հեռաձայն կընե Սիսիան, որ Դերենիկ սրբազանը վաղը առավոտ պիտի շկարենա պատարագի գալ, որովհետեւ օդը աննպաստ է և դժվար է ճամբորդել։ Մինչև կես գիշեր տաթևացիներու հետ փոսակցելով կանցնեմ ժամանակս։ Կմեկնին. իսկ ես գեշերվան մնացյալ մասը կհսկեմ արթուն ու հոգվով կհաղորդակցիմ մեծ վարդապետներու հոգիներուն հետ։

Տաթեսի գիշերը... մշուշ, անձրև, աղջամուղջ, աղոթք, խոփում, վերացում։

1 նոյեմբերի, կիրակի. — Ո'չ մեկ զանգակի զողանց Տաթեսի մեջ... սարսուս մը կանցնի հոգին։ Կերթանք վանք. կարճ ժամերգություն մը կընենք Գավազան-սյունին առջև. որ ծնրադիր կաղոթեմ, որ մեր բոլոր դպրելանքներուն մեջ տաթևացի մեծ վարդապետներու նման եկեղեցականներ պատրաստենք։

Վտանգավոր է վերադառնալ ինքնաշարժով։ Սյունեցիք բարձրահասակ և գեղեցկադիեր կրերեն մեզի. կհեծնենք. քանի մը հոգի կընկերանան մեզի. Կիշնենք Սյունյաց Մեծ Անապատը՝ Որոտան գետի եղերքը. վանքին պահապանը ամենուրեք կպտտցնի մեզ, եկեղեցին պարսպապատ է, կառուցված շորս հաստաբեստ սյուներու վրա։ Որոտանի ափով կշարունակենք մեր ճայրան։ Մեր ճախին հսկա քարայրներ, մեծովի ժայռեր. կանցնինք անոնց տակեն. սոսկում մը կունենամ... եթե հանկարծ ժայռերն մին պոկի...։ Քիչ մը անդին այն վայրն է, ուր Դավիթ-թեկ ապաստանած է իր զորքին հետ։ Կանցնինք Սատանի կամուրջն. ամեչի ժայռը տեղի տվեր է հանքային ջուրերու կոհակներուն ու շիներ է բնական կամուրջ։ Չորեն կբարձրանանք լեռ. թանձր մառախուղ՝ սարերուն վրա. ծիերը քով-քովի իրարու ետևեն կքալեն. հաղիվ կարող կըլլանք զիրար տեսնել։ Անդունդներուն վրա՝ արա-

հետ, այսպես է Սյունյաց աշխարհը։ Կհանինք Հալիծորի հնֆնաշարժ մը կսպասե մեղի. կշարունակենք մեր ճամբան դեպի Գորիս. մինչ սյունեցիք կնետվին նժույգներու վրա ու կլերադառնան Տաթե։

Մշուշու ու ցիստ լեռնային ճամբաներն մեր շարժավարը ապահով մեղ Գորիս կհասցնեա՝ անցներով Շնհեր գյուղեն։ Կմեկնինք հին Գորիս. հու կան 80-ե ավելի ժայռափոր տուներ, ուր կրնակին հայ ընտանիքներ։ Ամառ ատեն զով կընե այս տուներուն մեջ, իսկ ձմեռը՝ տաքով։ Կմտնենք այդ տուներն շատերուն մեջ. շերմագին կընդունին մեզ։ Մութը կոխեց ու մենք գիշերեցինք Գորիս։ Ունեցանք այցելուներ, որոնք ուշ ատեն մեկնեցան։

2 նոյեմբերի, երկուշաբթի. — Առավոտյան ժամը 6-ին գործկոմի նախագահին ավտոյով Սիսիան մեկնեցանք։ Նախագահը՝ Հյուրասեր, բարի և պատվական անձնավլություն մը՝ իրեններով բարի ճանապարհ մաղթեց մեզի։ Լեռները համակ ձյուն են. Սիսիան՝ ծով մշուշի մեջ։ Կհյուրասիրվինք պարոն Եղիազար Եղիազարյանի տունը։ Նախաճաշե ետք նախագահը իր ավտոյով մեզ կառաջնորդե Որոտան վանքը. գիտության այս կեդրոնն ալ ավերակներու մեջ է։ 1931-ի երկրաշարժին հետևանքով կմըլի հոգիս... հայ վարդապետ մըն եմ. իզոր կորոնեմ սյունեցի վարդապետները. Որոտանցիի գերեզմանն անգամ շենք կրնար գտնել՝ ճամբորդելու և երկրապետու մեծ սովորին առջև։ Վանքը կառուցված է սարայանջի վրա. վարը Որոտան գետն է. շորս կողմը՝ սիրուն կանաչություն։ Վանքի ավերակներուն մեջ, ուր կկերապիրինք մեծ վարդապետներու հիշատակը, կուփտենք լեցվիլ իրենց տեսիլքովն ու հոգիովը։ Կայցելենք Վաղատին գյուղը, Սիսիանի Ս. Խստվածածին եկեղեցին՝ փառավոր տաճար Ս. Հոփիսիմեի տիպին նման, կառուցված։ Է. դարուն. Գըմբեթին քիվին վրա շորս ավելուրանիշները բանդակված են։ Կարճ ու շերմեռանդ աղոթք մը ետք... կմեկնինք երևան։

(«ՀԱՅԱ», պաշտոնական ամսագիր Կարողիկոսուրյան Հայոց Կիլիկիո, Անդրիկիաս, հունվար, 1954)

(Ծարսւեակելի)